կանաց զկնիք կոնդակաց, եւ զայլ անձնական դոյս թո-
ղուլ 'ի Ս. Աթոռն ընդ բանալեաւ. առեալ ընդ իւր մի-
այն զհարկաւորեալսն՝ չկնքել զՊատրիարքարանն, այլ մի-
այն փակել և զբանալի նորին դնել 'ի գանձարան եկեղե-
ցւոյ 'ի ձեռն Լուսարարի. և 'ի ծառայութիւն 'ի ճանա-
պարհի առնուլ միայն զԴաւիթ վարդապետ իւր եւ զայլ
ոմն. զի ազգայինք առաւել քան զայս յարմար սպեղանի
ոչ կարացին տնօրինել, ուստի մի ոք հակառակեսցի եւ
կամ խափանեսցէ զելանել նորին յԱթոռոյ՝ պատճառելով
զպատճառս, զի մինչեւ ոչ ելցէ նա 'ի քաղաքէն, դառնու-
թիւնք հարկապահանջ բռնաւորաց ոչ դադարին, որով
հանդիպի Աթոռն մեծամեծ վնասուց և պարտուց անվճար։
Եւ 'ի խոժոռիլ պարտատերաց և կամ 'ի պահանջել զառ-
նելիս իւրեանց 'ի Պատրիարքէն՝ յանձն առնուլ Խորհրդա-
կանաց ղոյն՝ թէ պարտքն Աթոռոյն է և մեր. զայս ամենայն
գրեանս յանձն արարեալ Ոստիկանին և Մկրտիչ վարդա-
պետին առաքեցին յԵրուսաղէմ։ Եւ ճանապարհ արարեալ
սոցա հասին անվնաս յԵրուսաղէմ (յ9 Օգոստոսի). և 'ի
նմին աւուր իջին 'ի Դատարան և ետուն կոչել անդ ըզ-
Գաբրիէլ Պատրիարքն հանդերձ Մերօք և Խորհրդականօք,
ուր ընթերցան առաջի բազմութեան զհրովարտակն Ար-
քայի, եւ յանձն առ Գաբրիէլ հնազանդիլ հրամանի Ար-
քային և Ազգին, ապա ել 'ի ճանապարհ ունելով ընդ իւր
զՄուսաչիրն և զարս 4 դնալ 'ի Կոստանդինուպոլիս ('ի 19
Օգոստոսի)։ Եւ զկնիք ամսօրեայ ժամանակի ըստ յորդորա-
նաց գլխաւորաց ազգին, և խնդրանաց Աթոռայնոց դիմեաց
Պօղոս Եպիսկոպոս միայն 'ի Ս. Երուսաղէմ ընդ ուխտա-
ւորաց. դիտել քննել, և զննել լուելեայն զկարեւոր պա-
րագայս Աթոռոյն տեղւոյն և ժամանակին, և ըստ այնմ
հոգալ զհարկաւորսն, և մնալ անդ որքան ախորժիցէ. և
յելանել նորին մի գուցէ ոք բռնադատեսցէ մնալ. զի քաջ
գիտէր նա խորհիլ զօգուտ Աթոռոյն եւ զհարկաւորսն
տնօրինել, այնպէս Պօղոս ել 'ի Կոստանդինուպոլսոյ եւ
Գաբրիէլ յԵրուսաղէմ։

Եկաս Պօղոս յԵրուսաղէմ ('ի 4 Նոյեմբերի), արար ժո-
ղով յեկեղեցի Ս. Յակոբայ ('ի 16 Նոյեմբերի). մեկնեցաւ
երթալ յեգիպտոս Բեթղեհէմի ճանապարհաւ ('ի 14 Դեկ-